Տ. ՍԵՒԱԿ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(13 փետրվար, 2022 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Վեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ծնվեց, եւ դա եղավ մեզանից 2020 եւ ավելի տարի առաջ: Այդ օրերից սկսյալ եւ դրանից հետո եւ այս պահին եւս անհաշվելի ծնունդներ եղան. ծնվում են հենց հիմա ու կծնվեն դեռ շատ, բայց մինչ այսօր չկա որեւէ մի ծնունդ, որ կոչվի Սուրբ, որ այնքան Սուրբ լինի, որ տարին ու նրա պտույտը հաշվվի այդ օրվանից սկսյալ, մի պատիվ, որ վեր է քան ամեն պատիվ, եւ այդ պատվին արժան է Քրիստոս, որ ծնվեց փարախում՝ մսուրի մեջ, քանի որ տեղ չկար նրանց համար հյուրատանը...

Հեշտ է խոսել նման վիճակի մասին, բայց ապրելը նման պահեր՝ սարսափելի դժվար է: Քրիստոնեության մեջ ամենակարեւորն ապրումակցումն է, իսկ եթե այն չկա, ուրեմն Քրիստոս, Սրբությունը եւ Փրկչի ծնունդը մեզ համար կմնան իբրեւ պատմական մի դրվագ անխոս ու սառը մի իրականության, որը երբեք առնչություն չունի մեր օրվա ու ապրած դեպքերի հետ...

Քրիստոնեությունն ապրումակցում է, ապրումակցում կյանքի եւ Քրիստոսով նորոգված՝ առավել քան կյանքի: Ինչ է այն, եթե ոչ կարեկցանք անծանոթի հանդեպ, որն այդ պահին քո օգնության կարիքն ունի, օգնություն, որը հաճախ քեզ նեղություն տալով պիտի անես: Այո՛, հյուրատանը Փրկչի ծննդյան պահին տեղ չկար, նույնիսկ կարեկցանք չկար հղի կնոջ հանդեպ: Կարծես նույն վիճակն է, երբ քաղաքային փոխադրամիջոց ես բարձրանում. բարձրանում ես, ներսում տեղ չկա, բայց նաեւ մարդ չկա ներսում. բոլորն ընկղմված են հեռախոսների սոցիալական հարթակներում եւ մոռացության են տվել ներկա իրականությունը, որում հղին կարող է կանգնած մնալ՝ տեղ չգտնելով նստելու, մինչդեռ նրա որովայնում հասունանում է վաղվա մեր երկիրը, փրկիչը

մեր, մեր գիտնականն ու պաշտպան զինվորը, մեր ապագան ու մեր հույսը, արհամարհված մեր Քրիստոսը՝ մեր անխնամ վաղը... եւ սա միայն մեկ օրինակն է օրվա բազում դրվագներից։

Հիմի կասեք, թե ինչ կապ ունի այս ամենը Քրիստոսի Սուրբ Ծննդյան հետ։ Այո՛, ունի՛. Քրիստոսի ծնունդը պիտի առաջին հերթին լինի մեր մեջ, Նա պիտի զարգանա ու աճի մեր ներսում, որ սրբացնի մեր օրը, նորոգի մեզ ու մեր կյանքը, մեր մտածումները, մեր վարքը... Սա է իրական հանդիպումը Քրիստոսի հետ, Որի ծնունդը չպիտի վիժեցնել մեր մեջ միայն նրա համար, որ մեզ անհարմար է կիսել մեր եսը Փրկչի հետ, այլ պետք է նրբությամբ, զգուշությամբ խնամել նորածնին ու հոգալ նրա մասին, կերակրել բարությամբ, որ ապրի մեր մեջ, հասակ առնի եւ հրաշագործի մեր ներսում եւ մեր ձեռքերով բարին գործի, մեր ոտքերով ընթանա օգնության կարիքավորներին, մեր շուրթերից օրհնաբանի Աստված եւ քաջալերի հուսահատներին, մեր աչքերով դիտի շուրջը՝ ոչ թե մեր մարմնի շահը փնտրելով, այլ համայնի օգտի համար ջանա, որ մեր սրտում թագավորի խաղաղության Աստվածը, եւ Սրբության շունչը մեզ մի նոր կյանք տա...

Այս պահից սկսյալ եկեք ուղղենք մեր եւ մեր նախնյաց սխալները, լինենք ուշադիր մեզ մոտեցող ամեն ինչի հանդեպ, հիշենք, որ Աբրահամն ու Սառան չէին ճանաչում անծանոթ հյուրերին, բայց նրանց ոտքերը լվացին, հաց տվեցին եւ վրանում անկողին պատրաստեցին եւ միայն մյուս օրը՝ նրանց գնալուց հետո, հասկացան, որ հրեշտակներ էին եկողները, եւ նրանք էին, որ օրհնեցին Սառային, եւ նրա որովայնում պտուղը զարգացավ...

Լինենք անչափ ուշադիր, որ չանարգենք մեզ առաքված հրեշտակներին, որոնք մեր փորձությունից հետո պիտի օրհնեն մեզ... Հիշենք ու չմոռանանք, որ ամեն մարդու մեջ կա Աստծուց փչված կենդանության Հոգին։ Հարգենք այն, որ մեր մեջ էլ կենդանի մնա Տիրոջ Հոգին ու հրաշագործի մեր կյանքը բազում երեւումներով, որ ցնծությամբ եւ ուրախությամբ, բազում ապրումակցումներով ասենք. Քրիստոս ծնվեց եւ հայտնվեց, եւ օրհնյալ է ծնունդը Քրիստոսի մեր մեջ...